ՈՒՍՈՒՑՉԻ ՕԳՆԱԿԱՆ

Ուսուցչի օգնականը ԱՈՒՊ-ի տարեկան նպատակներին և խնդիրներին ուղղված գործողությունների իրականացման ընթացքում ուսուցչի անմիջական աջակիցն է և ուսուցիչների կողմից սովորողի ԱՈՒՊ-ի պատշաճ լրացման աշխատանքների համակարգողը: Նա՝

- ուսուցչի ուղղորդմամբ աշակերտներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կապված ուսուցման գործընթացների և նոր հանձնարարությունների հետ,
- տվյալ աշակերտի առարկայական ուսուցիչներին, մանկավարժահոգեբանական աջակցության թիմի անդամներին և ծնողին տեղեկատվություն է տրամադրում նախկինում կիրառված արդյունավետ ուսուցման և ուսումնառության ռազմավարությունների մասին,
- օգնում է ուսուցիչներին դասի պլանավորման և ուսումնամեթոդական նյութերի պատրաստման ու տրամադրման հարցերում,
- մշտապես մասնակցում է ԱՈՒՊ-ի վերաբերյալ խմբային ժողովներին, ինչպես նաև մշտադիտարկման, ընթացիկ գնահատման և կիսամյակային ու տարեկան ամփոփիչ գնահատման գործընթացներն: